

ԻՄ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ։

*Լուսանկարները՝ ՆԵՄՐՈՒԹԻ*



# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԵՐԵՆ

Վերջերս Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հասցեով Իրանից ստացվեց «Հայաստանի պատմություն» աշխատության երկու հատորները՝ պարսկերեն։ Այն ներկայացնում է Երևանում լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության» միհատորյակի թարգմանությունը (հեղինակներն են ակադեմիկոս Ս. Երեմյանը, Երևանի պետական համալսարանի պրոֆեսորներ Գ. Սարգսյանը, Թ. Հակոբյանը, Կ. Խուդավերդյանը։ Գլխավոր խմբագիրն է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը)։ Այդ աշխատությամբ ընթերցող լայն շրջաններին է ներկայացվում հայ ժողովրդի պատմությունը՝ հնագույն ժամանակներից սկսած մինչև մեր օրերը։ Վերջին երեք տասնամյակում հայ ժողովրդի պատմությանը նվիրված շատ գրքեր են հրատարակվել, սակայն ծավալով ոչ մեծ, միաժամանակ մեր պատմության ամբողջական ընդգրկումով նման մի գրքի անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում։ Սովետահայ պատմաբանների ներկա աշխատությունը նման պատմություն ստեղծելու հաջողված փորձ է։ Գրքի այդ առավելություններն են, որ մղել են իրանահայ շնորհալի թարգմանիչ Էդուարդ Գերմանիկին (Բաղդասարյան)՝ ձեռնարկելու նրա թարգմանությունը պարսկերեն։

Գիրքը, որ թարգմանիչը վերախորագրել է «Հայաստանի պատմություն», տպագրվել է երկու հատորով։

Առաջին հատորն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարի վերջերը, իսկ երկրորդ հատորը՝ 19-րդ դարից մինչև մեր օրերը (1971 թ.) ընկած ժամանակաշրջանը։

Էդ. Գերմանիկի այս հայրենանվեր աշխատանքը դրվատանքի արժանի գործ է, քանի որ մինչև այսօր, ինչպես նշում է թարգմանիչը, հայ ժողովրդի պատմությունը ներկայացնող լիարժեք աշխատություն պարսկերեն լեզվով չի հրատարակվել։

Էդ. Գերմանիկը հարազատ է մնացել բնագրին։ Թարգմանությունը կատարված է պարզ ու սահուն լեզվով։ Ընթերցողին օգնելու նպատակով թարգմանիչը գիրքն օժտել է ծանոթագրություններով, որտեղ անհրաժեշտ բացատրություններ են տրված որոշ տերմինների, կազմակերպությունների, անունների և տեղանունների վերաբերյալ։ Գրքում զետեղված են նաև քարտեզներ։

Կ. ՄԻՐԶԱՅԱՆ

---

... ընդհանուր հաշվեկշռի մեջ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ 6

28 ԱՊՐԻԼԻ, 1982 Թ., № 18 (874)

այլազան հաստոցներն ու սարքերը կարելի է տեսնել Հնդկաստանում, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի ու Եվրոպայի երկրներում։

Հանրապետության արտահանվող ար-

ձեռնարկությունների արտադրանքն արտահանվում է Անգլիա, ԳՖՀ, Ավստրիա, Շվեյցարիա, Ավստրալիա, Հորդանան և այլ երկրներ։

Երկար տարիներ Սովետական Հայաստ-

բյուրեղապակու գործարանի արտադրանքն արդեն հետաքրքրում է Ռուանիայի, Պորտուգալիայի, Իտալիայի, Հորդանանի և շատ այլ երկրների գնորդներին։

ԿԱՐԻՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

---

Տեր-Պողոսովը կանգնած էր անկաշկանդ, պատասխանում էր ստույգ ու կարճ, ու դա Կովալևսկուն դուր եկավ։

— Տեղացի՞ եք։

— Ծնվել եմ Բայազետում, բայց սովորել եմ Մոսկվայում։

«Սպասիր։ Կվերադառնամ»։ Հաղորդում եմ բառ առ բառ։

— Բայց ինչո՞ւ... Ախր ինչո՞ւ սպասենք, սիրելիդ իմ։

— Գեներալը ճանաչում է Իգդիր։

Կովալևսկին հանեց գլխարկը, մեծ թաշկինակով երկար սրբեց խոնավացած ճաղատը։ Բայազետում, թիկունքների ու գումակայինների հետ միասին, ոչ մի

լաց, աներևակայելի շփոթ— այդ բոլորը մի կողմ էր քշում ուշացած զինվորներին, որոնցից շատերը վիրավորված էին։ Ոմանք պառկեցին, պաշտպանվելով կրակով և իրենցով ծածկելով սարսափահար բնակիչներին, ոմանք համառորեն նետվում էին դեպի բաղձալի դռնակը, բայց մեծամասնությունը նետվեց փրկություն գտնելու հին քաղաքի խճճված լաբիրինթոսներում։ Այդ զինվորները գրեթե բոլորն էլ կամ սպանվեցին